

շարեւով մարդահասակ մի բարձրացուցած են որմերն:  
Այս տեղ է սուրբ Սուքիասանց կատարուած վայրը:

Մատուռներու մէկուն մէջ 1850—60 թուականներուն հայ քահանայք պատարագ կը մատուցանէին, իսկ այժմ ոչ, միւսին մէջ կաթողիկէ պատարագ կը մատուցանեն, այժմ ևս իսկ զրեթէ ամրան ամէն կիւրակէ՝ ուր երբէք կաթողիկ ուխտաւոր պակաս չէ:

Բլրակս բնութեան պատրաստած, տաշած ու կոփած, շերտ շերտ բաժանած 3—4 մեթր երկարութիւն ունեցող քարերէ կազմուած է, սորա ծայրն հազիւ ընդարձակ եկեղեցւոյ դիրքի մի չափ լինի, այս գազաթան արեւելեան եզրն զառիվայրի վերայ ևս մի մեծ շերտ քար հակեալ կայ, աւանդութիւնը կը պատմէ թէ Սուքիասանք այս քարի վերայ կատարուած են:

Երիտասարդք և ազջկունք հագած, կապած, այս քարը շրջապատած՝ իրենց բաղդը կը փորձէին, մի մի փոքր քար կը ձգէին, ում քարն որ այս շեղ քարի վերան կանգնեցաւ, նորա բաղդն յաջող էր, նա նոյն օրը զուարթ դէմքով կը շարժէր ուխտաւորներուն մէջ:

Մատուռիս արեւմտեան կողի ստորոտն՝ մեր կեցած տափարակից քիչ ցած լուսաղբիւրն է, սա փոքրիկ աւազան մէ, սորա վերան քար մը հաստատուած է, մի կողմէն հազիւ մի մի բաժակ ջուր առնուի:

Տափարակիս արեւմտեան հարաւն է ընկած Գլխաջուրն, որ առատ բղխելով և խոր ձորակ մի կազմելով՝ կանցներ դէպի ներքին Խօփուղ Մատուռի հարաւէն:

Այս անգամ մեր նպատակն էր մինչև Կարգարծը բարձրանալ, Սուքիասանց ձգնած վայրը տեսնել:

Գլխաջրէն վեր թիք զայր մի բռնելով 1 <sup>1</sup>/<sub>4</sub> ժամ բարձրացանք մինչև լերանս <sup>1</sup>/<sub>5</sub>-ը: Տեղ տեղ մազլցելով